ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՁԲ-21/10/Բ/7/ԻԾ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	կիսավերարկու	Ծանոթություն-տվյալ ապրանքը ապրանքային նշան չունի	«Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ	Բաճկոնը գունաքողարկող կտորից՝ 49% բամբակ 51% պոլիէսթեր APT.-4c5-KB, 210գ մակերեսային խտությամբ, պատկերը-4735/1, աստառը՝ սև կամ մուգ սինթետիկ գործվածքից: Հանվող սև գույնի մորթե օձիքով, մինչև գոտկատեղը ձգվող գոտիով և տաք ներդիրով /300 գրամ մակերեսային խտությամբ սինտեպոնով/: Կիսավերարկուի գոտու կողային մասերը ունի 12 – 18 սմ երկարությամբ առանձգական ժապավեն: Կոճկվում է կափույրով ծածկվող շղթայով: Թիկունքը վերին կտրվածքով: Լանջափեշերի ներքևի մասում թեք ներկարված գրպաններ: Կրծքամասում արտաքին ձևավոր կափույրով, կոճակով կոճկվող գրպաններով: Թեզանիքը առանձգական ժապավենով, ձախ կողմում ծոցագրպան: Ձախ գրպանի վերևի մասում 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ՝

					կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ոստիկանության թևքանշան՝ բաղկացած է 2 մասից, կողային մասերը մշակված կարմիր գույնի՝ փակ եզրակարով: Ուսադիրները գունաքողարկվող կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ՝ վրադիրներով: Առջևի աջ գրպանի վերևի մասում ամրացվում է ««POLICE»» մակագրությամբ կտոր, թիկունքին ««ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ»» մակագրությամբ կտոր: Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է պատասխանատու ստորաբաժանմանը ներկայացնի նմուշ՝ արտաքին տեսքը հաստատված նմուշին համաձայնեցնելու համար: Փաթեթավորումը՝ ստվարաթղթե արկղերով, արկղերի մեջ 10հատ, տեսականին պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխ. պայմանի համարը: Բաճկոնի վրա պետք է կախած լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, չափսը, արտադրվող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և տեխ. պայմանի համարը, ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Անհրաժեշտության դեպքում,

				պատասխանատու ստորաբաժանման պահանջով, մատակարար կազմակերպությունը յուրաքանչյուր մատակարարված խմբաքանակի համար պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ, արտոնագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Չափս - հասակային սանդղակը. 44/2 – 62/6, քանակները՝ ըստ պատվիրատուի պահանջի:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Масиси Гарун Кари Фабрика ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՈՉ ԷԱՃԱՊՉԲ-21/10/Բ/7/ԻԾ ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				